

Սույն փաստաթուղթը միայն տեղեկատվական գործիք է, և հաստատությունները դրա բովանդակության համար որևէ պատասխանատվություն չեն կրում:

- B Էներգիայի ներքին շուկայում օգտակար ջերմության պահանջարկի հիման վրա համակցված արտադրության խթանմանը վերաբերող և 92/42/ԵՏՀ հրահանգը փոփոխող՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ 2004 թվականի փետրվարի 11-ի 2004/8/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ
(ՊՏ L 052, 21.02.2004թ., էջ 50)

Փոփոխված՝

Պաշտոնական տեղեկագիր

Թիվ էջ ամսաթիվ

- M1 Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 L 87 109 31.3.2009
թվականի մարտի 11-ի թիվ 219/2009(ԵՀ)
կանոնակարգով

▼B

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա 175(1) հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1),

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի եզրակացությունը (2),

հաշվի առնելով Տարածաշրջանային հարցերով կոմիտեի եզրակացությունը (3),

գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն (4),

Քանի որ

- 1) ներկայումս Համայնքում թերի է օգտագործվում համակցված արտադրության՝ որպես էներգիա խնայելու միջոց կիրառվելու ներուժը: Օգտակար ջերմային պահանջարկի հիման վրա բարձր արդյունավետության համակցված արտադրության խթանումը Համայնքի առաջնահերթությունն է՝ հաշվի առնելով համակցված արտադրության հնարավոր առավելությունները՝ կապված առաջնային էներգիայի խնայողության, ցանցային կորուստներից խուսափելու և արտանետումների՝ մասնավորապես ջերմոցային գազերի նվազեցման հետ: Բացի դրանից, համակցված արտադրության միջոցով էներգիայի արդյունավետ օգտագործումը կարող է նաև դրական ազդեցություն ունենալ էներգամատակարարման անվտանգության և Եվրամիության ու դրա անդամ պետությունների մրցակցային միջավայրի վրա: Հետևաբար, անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել էներգիայի ներքին շուկայում տվյալ ներուժի ավելի արդյունավետ կիրառումն ապահովելու նպատակով,
- 2) Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 թվականի հունիսի 26-ի 2003/54/ԵՀ հրահանգով (5) սահմանվում են էլեկտրաէներգիայի ներքին շուկայում էլեկտրաէներգիայի արտադրության, հաղորդման, բաշխման և մատակարարման ընդհանուր նորմերը: Այս համատեքստում համակցված արտադրության զարգացումը նպաստում է մրցակցության ուժեղացմանը նաև շուկա նոր մուտք գործողների նկատմամբ,
- 3) «Էներգամատակարարման անվտանգությանն ուղղված Եվրոպական ռազմավարություն» վերնագրված Կանաչ փաստաթղթով ընդգծվում է, որ Եվրոպական միությունը մեծապես կախված է էներգամատակարարման արտաքին աղբյուրներից, որոնցով ներկայումս ապահովվում է պահանջարկի 50 տոկոսը, իսկ ներկայիս միտումների պահպանման դեպքում, կանխատեսվում է, որ մինչև 2030 թվականը այդ ցուցանիշը կհասնի 70 տոկոսի: Ներկրումից կախվածությունը և ներկրումների ավելացող բաժինը մեծացնում են մատակարարման ընդհատման կամ դրա հետ կապված դժվարությունների առաջացման վտանգը: Այնուամենայնիվ, մատակարարման անվտանգությունը չպետք է ընկալվի պարզապես ներկրումից կախվածության նվազեցման և տեղական արտադրության խթանման խնդիր: Մատակարարման անվտանգության համար պահանջվում է ռազմավարական

նախաձեռնությունների լայն շրջանակ՝ նպատակաուղղված, ի թիվս այլոց, աղբյուրների ու տեխնոլոգիաների տարատեսականացմանը և միջազգային հարաբերությունների բարելավմանը: Բացի այդ, Կանաչ փաստաթղթով ընդգծվում է, որ էներգամատակարարման անվտանգությունը կարևոր է հետագա կայուն զարգացման համար: Կանաչ փաստաթղթում եզրակացվում է, որ էներգիայի պահանջարկը նվազեցնելու նպատակով նոր ակտերի ընդունումը կարևոր է թե՛ ներկրումից կախվածության նվազեցման, և թե՛ ջերմոցային գազերի արտանետումների սահմանափակման համար: Կանաչ փաստաթղթի վերաբերյալ 2001 թվականի նոյեմբերի 15-ի իր որոշմամբ (6) Եվրոպական պառլամենտն առաջարկեց խրախուսական միջոցներ սահմանել՝ էներգիա արտադրող արդյունավետ կայաններին, այդ թվում է ջերմային և էլեկտրական էներգիայի համակցված արտադրության կայաններին անցնելու գործընթացը խրախուսելու համար,

- 4) 2001 թվականի հունիսի 15-ին և 16-ին Գոթենբուրգում Եվրոպական խորհրդում ներկայացված «Կայուն Եվրոպա հանուն աշխարհի բարօրության. Եվրոպական միության ռազմավարություն ուղղված կայուն զարգացմանը» անվանմամբ Հանձնաժողովի հաղորդագրությամբ կլիմայի փոփոխությունը ճանաչվել է կայուն զարգացման գլխավոր խոչընդոտներից մեկը և շեշտվել է մաքուր էներգիայի օգտագործման ծավալների ավելացման և էներգիայի պահանջարկի նվազեցման համար հստակ գործողությունների անհրաժեշտությունը,
- 5) համակցված արտադրության ավելի լայն օգտագործումը՝ ուղղված առաջնային էներգիայի խնայողությանը, կարող է Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիային կից Կիոտոյի արձանագրությանը համապատասխանելու համար անհրաժեշտ համալիր միջոցառումների կարևոր բաղկացուցիչը լինել ու նաև ընդգրկվել հետագա պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ռազմավարական համալիր միջոցառումներում: Հանձնաժողովը՝ Կլիմայի փոփոխության Եվրոպական ծրագրի առաջին փուլի իրականացման վերաբերյալ իր հաղորդագրությունում համակցված արտադրության խթանումը ճանաչել է որպես էներգետիկ ոլորտի գործունեության հետևանքով ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման համար անհրաժեշտ միջոցներից մեկը և հայտարարել

2002 թվականին համակցված արտադրության խթանման վերաբերյալ Հրահանգի ընդունման առաջարկ ներկայացնելու իր մտադրության մասին,

- 6) Կլիմայի փոփոխության Եվրոպական ծրագրի առաջին փուլի իրականացման վերաբերյալ Հանձնաժողովի հաղորդագրության մասին 2002 թվականի սեպտեմբերի 25-ի իր որոշմամբ (7) Եվրոպական պառլամենտը ողջունում է ջերմության և էլեկտրաէներգիայի համակցված արտադրության (ՋԷՀԱ) օգտագործման խթանմանն ուղղված Համայնքի միջոցներն ուժեղացնելու առաջարկ ներկայացնելու գաղափարը և կոչ է անում անհապաղ ընդունել ՋԷՀԱ-ի խթանմանը վերաբերող Հրահանգ,
- 7) համակցված արտադրության կարևորությունը ճանաչվել է նաև Խորհրդի 1997 թվականի դեկտեմբերի 18-ի որոշմամբ (8) և Եվրոպական պառլամենտի 1998 թվականի մայիսի 15-ի որոշմամբ (9), որոնք վերաբերում են Համայնքի՝ համակցված ջերմության և էներգիայի խթանմանն ուղղված ռազմավարությանը,
- 8) 2000 թվականի մայիսի 30-ի և 2000 թվականի դեկտեմբերի 5-ի իր եզրակացություններում Խորհուրդը հաստատեց Հանձնաժողովի՝ էներգաարդյունավետության գծով գործողությունների պլանը, իսկ համակցված արտադրության խթանումը սահմանեց որպես կարճաժամկետ կտրվածքով առաջնահերթ ոլորտներից մեկը: Եվրոպական պառլամենտը 2001 թվականի մարտի 14-ին էներգաարդյունավետության գծով գործողությունների պլանի վերաբերյալ իր որոշման մեջ (10) կոչ արեց Հանձնաժողովին առաջարկություններ ներկայացնել համակցված արտադրությունը խթանող ընդհանուր կանոններ սահմանելու նպատակով, եթե դա բնապահպանական տեսանկյունից նպատակահարմար է,
- 9) «Աղտոտվածության կանխարգելման և վերահսկման համապարփակ մեխանիզմների մասին» Խորհրդի 1996 թվականի սեպտեմբերի 24-ի 96/61/ԵՀ հրահանգով (11), «Այրման խոշոր կայաններից որոշակի աղտոտող նյութերի՝ դեպի մթնոլորտ արտանետումները նվազեցնելու մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2001 թվականի հոկտեմբերի 23-ի 2001/80/ԵՀ հրահանգով (12) և «Թափոնների այրման

մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2000 թվականի դեկտեմբերի 4-ի 2000/76/ԵՀ Հրահանգով (13) ընդգծվում է նոր կայանքներում էներգիայի համակցված արտադրության հնարավորությունը գնահատելու անհրաժեշտությունը,

- 10) «Շենքերի էներգաարդյունավետության մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2002 թվականի դեկտեմբերի 16-ի 2002/91/ԵՀ Հրահանգով (14) անդամ երկրներից պահանջվում է ապահովել, որ 1000 մ²-ից ավել ընդհանուր օգտակար տարածք ունեցող նոր շենքերի շինարարության մեկնարկից առաջ քննարկվի և հաշվի առնվի այլընտրանքային համակարգերի, ինչպես օրինակ՝ ջերմային և էլեկտրական էներգիայի համակցված արտադրության տեխնիկական, բնապահպանական և տնտեսական հիմնավորվածությունը,
- 11) սույն Հրահանգում բարձր արդյունավետության համակցված արտադրությունը որոշվում է էներգիայի խնայողության ցուցանիշով, որն ապահովվում է ջերմային և էլեկտրական էներգիայի համակցված արտադրության միջոցով՝ դրանց անջատ արտադրության փոխարեն: Էներգիայի ավելի քան 10 տոկոս խնայողությունը որակավորվում է որպես «բարձր արդյունավետության համակցված արտադրություն»: Էներգախնայողության ցուցանիշներն առավելագույնի հասցնելու և դրանց կորուստը կանխելու նպատակով, հնարավորինս մեծ ուշադրություն պետք է դարձվի համակցված արտադրության տեղակայանքների շահագործման ռեժիմներին,
- 12) առաջնային էներգիայի խնայողության ցուցանիշի գնահատման համատեքստում, կարևոր է հաշվի առնել անդամ պետություններում տիրող իրավիճակը, որտեղ էլեկտրաէներգիայի սպառման մեծ մասն ապահովվում է ներկրումների միջոցով,
- 13) թափանցիկության նկատառումներից ելնելով կարևորվում է համակցված արտադրության ներդաշնակեցված հիմնական սահմանման ընդունումը: Եթե համակցված արտադրության կայանքները նախատեսված են էլեկտրական և ջերմային էներգիայի անջատ արտադրության համար, ապա նման արտադրությունը չպետք է սահմանվի որպես համակցված արտադրություն՝ ծագման երաշխիք տրամադրելու և

վիճակագրական նպատակներով,

- 14) անհրաժեշտ է սահմանել չափանիշներ հիմնական սահմանմանը համապատասխանող համակցված արտադրության էներգաարդյունավետության որոշման և գնահատման համար՝ ապահովելու համար, որ սույն Հրահանգի համատեքստում համակցված արտադրության մասով օժանդակությունը հիմնված լինի օգտակար ջերմության պահանջարկի և առաջնային էներգիայի խնայողության ցուցանիշների վրա,
- 15) սույն Հրահանգի գլխավոր նպատակը համակցված արտադրությամբ ստացված էլեկտրաէներգիայի հաշվարկման ներդաշնակեցված մեթոդ և դրա իրացման համար անհրաժեշտ ուղեցույցներ սահմանելն է, հաշվի առնելով, օրինակ՝ ստանդարտացման եվրոպական կազմակերպությունների կողմից ներկայումս մշակվող մեթոդաբանությունները: Այս մեթոդը պետք է տեխնիկական առաջընթացին հարմարեցվելու հնարավորություն ունենա: II-րդ և III-րդ հավելվածներում ներկայացված հաշվարկները համակցված արտադրության միկրո տեղակայանքների նկատմամբ կիրառելիս, համաչափության սկզբունքին համապատասխան, որպես հիմք կարող են ընդունվել տիպային նմուշի փորձարկման ընթացակարգով ստացված արժեքները, որոնք հավաստագրվում են իրավասու, անկախ մարմնի կողմից,
- 16) համակցված արտադրության և բարձր արդյունավետության համակցված արտադրության՝ սույն Հրահանգում օգտագործված սահմանումները չեն սահմանափակում ազգային օրենսդրությունում տարբեր սահմանումների օգտագործումը սույն Հրահանգով սահմանված նպատակներից բացի այլ նպատակներով: Բացի այդ, նպատակահարմար է նաև փոխառնել 2003/54/ԵՀ հրահանգում և «Էլեկտրաէներգիայի ներքին շուկայում վերականգնվող էներգիայի աղբյուրներից էլեկտրաէներգիայի արտադրության խթանման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2001 թվականի սեպտեմբերի 27-ի 2001/77/ԵՀ հրահանգում (15) պարունակվող համապատասխան սահմանումները,

- 17) համակցված արտադրության կայանում արտադրված օգտակար ջերմային էներգիայի քանակության հաշվառքը արտադրության ելքային կետում իրականացնելով շեշտվում է, բաշխման ցանցերում ջերմային մեծ կորուստների հետևանքով համակցված արտադրությամբ ստացված օգտակար ջերմության առավելությունների կորստից խուսափելու անհրաժեշտությունը,
- 18) էլեկտրաէներգիայի և ջերմության հարաբերակցությունը տեխնիկական բնութագիր է, որը պետք է սահմանվի համակցված արտադրությունից ստացված էլեկտրաէներգիայի ծավալը հաշվարկելու համար,
- 19) սույն Հրահանգի իմաստով, «համակցված արտադրության տեղակայանքներ» սահմանումը կարող է ներառել նաև սարքավորումներ, որոնցով միայն էլեկտրաէներգիա կամ միայն ջերմային էներգիա կարող է արտադրվել, ինչպիսիք են լրացուցիչ այրման և լրավառման տեղակայանքները: Նման սարքավորումից ստացվող արտադրանքը չպետք է համարվի համակցված արտադրություն՝ ծագման երաշխիք տրամադրելու համար և վիճակագրական նպատակներով,
- 20) «փոքրամասշտաբ համակցված արտադրություն» սահմանումը, ի թիվ այլոց, ներառում է համակցված արտադրության միկրո և բաշխիչ տեղակայանքները, ինչպիսիք են մեկուսացված տարածքները սպասարկող կամ կենցաղային, առևտրային կամ արդյունաբերական պահանջարկները բավարարող համակցված արտադրության տեղակայանքները,
- 21) համակցված արտադրությամբ և այլ տեխնոլոգիաներով արտադրված էլեկտրաէներգիայի միջև սպառողի ընտրության թափանցիկության մեծացման նպատակով անհրաժեշտ է ապահովել, որ արդյունավետության բազային (հղումային) ներդաշնակեցված արժեքների հիման վրա հնարավոր լինի երաշխավորել բարձր արդյունավետությամբ համակցված արտադրության ծագումը: Ծագման երաշխիք տրամադրելու մեխանիզմներով ինքնին չի ենթադրվում պետական աջակցության

մեխանիզմներից օգտվելու իրավունքի տրամադրում,

- 22) կարևոր է, որ բարձր արդյունավետության համակցված արտադրությամբ ստացվող էլեկտրաէներգիայի բոլոր ձևերն ունենան ծագման երաշխիքներ: Կարևոր է ծագման երաշխիքները հստակ կերպով տարբերակել փոխանակելի հավաստագրերից,
- 23) Միջնաժամկետ հեռանկարում շուկայում համակցված արտադրության ավելացումն ապահովելու համար, անհրաժեշտ է պահանջել, որ բոլոր անդամ երկրներն ընդունեն և հրապարակեն բարձր արդյունավետությամբ համակցված արտադրության ազգային ներուժի վերաբերյալ վերլուծական զեկույց և զեկույցում ներառեն համակցված արտադրության խոչընդոտներին և երաշխավորման համակարգի վստահելիության ապահովման նպատակով ձեռնարկվող միջոցներին վերաբերող առանձին վերլուծություն,
- 24) պետական աջակցության տրամադրումը պետք է համապատասխանի Համայնքի՝ շրջակա միջավայրի պաշտպանության գծով պետական աջակցության վերաբերյալ ուղեցույցների դրույթներին (16), ինչպես նաև մի քանի աղբյուրներից օժանդակությունների կուտակումից խուսափելու գործելակերպին: Ներկայումս այդ ուղեցույցներով հնարավորություն են տալիս օգտվելու պետական աջակցության որոշակի տեսակներից, եթե հնարավոր է ցույց տալ, որ տվյալ տեսակի աջակցության միջոցները շրջակա միջավայրի պաշտպանության առումով օգտակար են, Այդ աջակցությունը որոշ դեպքերում անհրաժեշտ կլինի համակցված արտադրության ներուժի հետագա օգտագործման համար, մասնավորապես՝ հաշվի առնելով արտաքին ծախսերը ներքին դարձնելու անհրաժեշտությունը,
- 25) համակցված արտադրության խթանմանն ուղղված պետական աջակցության ծրագրերում հիմնական շեշտը պետք է դրվի ջերմամատակարարման և հովացման՝ տնտեսապես հիմնավորված պահանջարկի ապահովման վրա հիմնված համակցված արտադրության վրա,

26) անդամ պետությունները կիրառում են համակցված արտադրության գծով աջակցության տարբեր մեխանիզմներ ազգային մակարդակում, ներառյալ ներդրումային օժանդակությունը, հարկերից ազատումները կամ նվազեցումների, կանաչ վկայագրերը և գների պահպանման/կայունացման ուղղակի ծրագրերը: Սույն Հրահանգի նպատակն իրագործելու կարևոր ուղիներից մեկը ներդրողների վստահությունը պահպանելու նպատակով այդ ծրագրերի արդյունավետ աշխատանքը երաշխավորելն է՝ մինչև որ գործողության մեջ դրվի համայնքային ներդաշնակեցված կարգավորող դաշտը: Հանձնաժողովը մտադիր է վերահսկել իրավիճակը և պետական օժանդակության ծրագրերի կիրառումից ձեռք բերված փորձի մասին զեկույց ներկայացնել,

27) բարձր արդյունավետության համակցված արտադրությամբ ստացված էլեկտրաէներգիայի հաղորդման և բաշխման համար պետք է կիրառվեն 2001/77/ԵՀ հրահանգի 7(1),(2) և (5) հոդվածի, ինչպես նաև 2003/54/ԵՀ հրահանգի համապատասխան դրույթները: Եթե համակցված արտադրությամբ էներգիա արտադրողը պետական օրենսդրության համաձայն սպառողի իրավունքներ ունեցող անձ է 2003/54/ԵՀ հրահանգի 21(1) հոդվածի իմաստով, ապա համակցված արտադրություն ապահովողներին երբեմն անհրաժեշտ հավելյալ էլեկտրաէներգիայի գնման հետ կապված սակագները պետք է սահմանվեն՝ ելնելով օբյեկտիվ, թափանցիկ և խտրականությունը բացառող չափանիշներից: Հատկապես համակցված արտադրության փոքր և միկրո տեղակայանքների համար բարձր արդյունավետության համակցված արտադրությամբ ստացված էլեկտրաէներգիայի ցանցային համակարգից օգտվելու հնարավորությունները կարող են դյուրին դարձվել Հանձնաժողովին ծանուցելու միջոցով,

28) ընդհանրապես, համակցված արտադրության մինչև 400 կՎտ հզորությամբ տեղակայանքները, որոնք համապատասխանում են «Հեղուկ կամ գազային վառելիքով աշխատող նոր ջրատաքացուցիչ կաթսաներին ներկայացվող արդյունավետության պահանջների մասին» Խորհրդի 1992 թվականի մայիսի 21-ի 92/42/ԵԵՀ Հրահանգի սահմանումներին (17) հավանական չէ, որ համապատասխանեն դրանում սահմանված

արդյունավետության նվազագույն պահանջներին և, հետևաբար, չպետք է ընդգրկվեն այդ հրահանգի մեջ,

- 29) համակցված արտադրության ոլորտի յուրահատուկ՝ փոքր և միջին ծավալով արտադրողներ ներառող կառուցվածքը պետք է հաշվի առնվի, հատկապես համակցված արտադրական հզորություն կառուցելու համար թույլտվություն ստանալու վարչական ընթացակարգերը վերանայելու ժամանակ,
- 30) սույն Հրահանգի իմաստով, համակցված արտադրության խթանման համար շրջանակ ստեղծելու համար կարևոր է ընդգծել համակցված արտադրության նոր կայանքներում ներդրումների համար կայուն տնտեսական և վարչական միջավայր ստեղծելու անհրաժեշտությունը: Անդամ պետություններին պետք է խրախուսել, որ խնդրին լուծում տրվի առնվազն չորս տարի տևողությամբ օժանդակության մեխանիզմներ մշակելու և վարչական ընթացակարգերի հաճախակի փոփոխություններից խուսափելու միջոցով և այլն: Այնուհետև անդամ պետություններին պետք է առաջարկել ապահովել, որ պետական օժանդակությունը համապատասխանի փուլ առ փուլ ավարտվելու սկզբունքին,
- 31) համակցված արտադրության ընդհանուր արդյունավետությունը և կայունությունը պայմանավորված են մի շարք գործոններով, ինչպիսիք են՝ կիրառվող տեխնոլոգիան, վառելիքի տեսակները, բեռնվածքի գրաֆիկները, տեղակայանքի չափը, ինչպես նաև ջերմության հատկությունները: Ելնելով գործնական նկատառումներից և հիմնվելով այն փաստի վրա, որ տարբեր նպատակների համար արտադրվող ջերմության համար անհրաժեշտ են ջերմության ջերմաստիճանային տարբեր մակարդակներ, և որ այս և մյուս տարբերություններն իրենց ազդեցությունն ունեն համակցված արտադրության արդյունավետության վրա, համակցված արտադրությունը կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝ «արդյունաբերական նպատակներով համակցված արտադրություն», «ջեռուցման նպատակներով համակցված արտադրություն» և «գյուղատնտեսական նպատակներով համակցված արտադրություն»,

32) Պայմանագրի 5-րդ հոդվածով սահմանված սուբսիդիարության և համաչափության սկզբունքի համաձայն, ներքին շուկայում համակցված արտադրության խթանմանն ուղղված շրջանակն ապահովող ընդհանուր սկզբունքները պետք է սահմանվեն Համայնքի մակարդակով՝ մանրամասն իրականացումը թողնելով անդամ պետություններին, այդպիսով յուրաքանչյուր անդամ պետությանը հնարավորություն տալով ընտրելու այն ռեժիմը, որը կոնկրետ իր դեպքում լավագույն տարբերակն է: Սույն Հրահանգով նախատեսվում է այն նվազագույնը, որն անհրաժեշտ է նշված նպատակներին հասնելու և այդ նպատակների իրագործման համար պահանջվող սահմանները չգերազանցելու համար,

33) սույն Հրահանգի կիրարկման համար անհրաժեշտ ակտերը պետք է ընդունվեն Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի 1999/468/ԵՀ որոշմանը համապատասխան (18),

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ՝

Հոդված 1

Նպատակը

Սույն Հրահանգի նպատակը էներգաարդյունավետության ավելացումը և մատակարարման անվտանգության բարելավումն է՝ էներգիայի ներքին շուկայում ջերմային պահանջարկի և առաջնային էներգիայի խնայողության հիման վրա ջերմային և էլեկտրական էներգիայի բարձր արդյունավետության համակցված արտադրության խթանմանն ու զարգացմանն ուղղված շրջանակի ստեղծման միջոցով, հաշվի առնելով ազգային կոնկրետ հանգամանքները, որոնք վերաբերում են հատկապես կլիմայական և տնտեսական պայմաններին:

Հոդված 2

Գործողության ոլորտը

Սույն Հրահանգը կիրառվում է 3-րդ հոդվածում սահմանված համակցված արտադրության և I-ին հավելվածում թվարկված համակցված արտադրության տեխնիկական կառուցվածքների նկատմամբ:

Հոդված 3

Սահմանումները

Սույն Հրահանգի իմաստով կիրառվում են հետևյալ սահմանումները՝

ա) համակցված արտադրություն (կոգեներացիա)՝ մեկ պրոցեսով ջերմային էներգիայի և էլեկտրական և (կամ) մեխանիկական էներգիայի միաժամանակյա արտադրություն,

բ) օգտակար ջերմություն՝ ջերմամատակարարման կամ հովացման տնտեսապես հիմնավորված պահանջարկը բավարարելու համար համակցված արտադրության պրոցեսում արտադրված ջերմություն,

գ) տնտեսապես հիմնավորված պահանջարկ՝ պահանջարկ, որը չի գերազանցում ջերմամատակարարման կամ հովացման պահանջները, և որը՝ հակառակ դեպքում, կբավարարվեր շուկայական պայմաններով՝ համակցված արտադրությունից բացի էներգիայի արտադրման այլ պրոցեսների միջոցով,

դ) համակցված արտադրությամբ ստացվող էլեկտրաէներգիա՝ օգտակար ջերմության արտադրության հետ կապված պրոցեսում արտադրվող և II հավելվածում սահմանված մեթոդաբանությանը համապատասխան հաշվարկվող էլեկտրաէներգիա,

ե) վթարային նշանակության էլեկտրաէներգիա՝ համակցված արտադրության պրոցեսի ընդհատման, այդ թվում՝ պրոֆիլակտիկ աշխատանքների, կամ խափանման դեպքում էլեկտրական ցանցերով մատակարարվող էլեկտրաէներգիա,

զ) հավելյալ էլեկտրաէներգիա՝ էլեկտրաէներգիա, որը մատակարարվում է էլեկտրական ցանցերով այն դեպքերում, երբ էլեկտրաէներգիայի պահանջարկը ավելի մեծ է, քան համակցված արտադրության միջոցով ստացվող էլեկտրաէներգիան,

է) ընդհանուր արդյունավետություն՝ էլեկտրաէներգիայի, մեխանիկական էներգիայի և օգտակար ջերմային էներգիայի տարեկան արտադրանքի ընդհանուր ծավալն է՝ բաժանած համակցված արտադրության պրոցեսում ջերմության, էլեկտրական էներգիայի գումարային քանակության և մեխանիկական էներգիայի արտադրության համար ծախսված վառելիքի ծավալի վրա,

ը) արդյունավետություն՝ վառելիքների «նվազագույն ջերմարարության» (նաև՝ ստորին ջերմարարություն) հիման վրա հաշվարկվող արդյունավետություն,

թ) բարձր արդյունավետության համակցված արտադրություն՝ III հավելվածով սահմանված չափանիշները բավարարող համակցված արտադրություն,

ժ) անջատ արտադրության արդյունավետության բազային (հղումային) արժեք՝ ջերմային և էլեկտրական էներգիայի այլընտրանքային այն անջատ արտադրության արդյունավետություն, որը նախատեսվում է փոխարինել համակցված արտադրությամբ,

ժա) էլեկտրաէներգիայի և ջերմության հարաբերակցություն՝ կոնկրետ տեղակայանքի շահագործման տվյալների օգտագործմամբ լրիվ համակցված ռեժիմով շահագործման պայմաններում համակցված արտադրությամբ ստացված էլեկտրաէներգիայի և օգտակար ջերմության հարաբերակցությունը,

ժբ) համակցված արտադրության տեղակայանք՝ համակցված արտադրության ռեժիմով աշխատելու կարողություն ունեցող տեղակայանք,

ժգ) համակցված արտադրության միկրո տեղակայանք՝ մինչև 50 էլեկտրական կՎտ առավելագույն հզորությամբ համակցված արտադրության տեղակայանք,

ժդ) փոքրամասշտաբ համակցված արտադրության՝ մինչև 1 էլեկտրական ՄՎտ տեղակայված հզորություն ունեցող համակցված արտադրության տեղակայանքներ,

ժե) համակցված արտադրությամբ ստացվող արտադրանք՝ համակցված արտադրությամբ ստացված էլեկտրաէներգիայի, մեխանիկական էներգիայի և օգտակար ջերմային էներգիայի ընդհանուր ծավալ:

Բացի դրանից, կիրառվում են նաև 2003/54/ԵՀ հրահանգով և 2001/77/ԵՀ հրահանգով նախատեսված սահմանումները:

Հոդված 4

Համակցված արտադրության արդյունավետության չափանիշները

1. Հանձնաժողովը՝ III հավելվածին համապատասխան համակցված արտադրության արդյունավետությունը որոշելու նպատակով 14(2) հոդվածում նշված կարգով ոչ ուշ քան 2006 թվականի փետրվարի 21-ը սահմանում է էլեկտրաէներգիայի և ջերմային էներգիայի անջատ արտադրության արդյունավետության ներդաշնակեցված բազային (հղումային) արժեքները: Արդյունավետության այդ ներդաշնակեցված բազային (հղումային) արժեքները պետք է բաղկացած լինեն ըստ համապատասխան, այդ թվում՝ կառուցման տարվա և վառելիքի տեսակների հետ կապված գործոնների տարբերակված արժեքների աղյուսակից և պետք է հիմնված լինեն փաստաթղթերով հիմնավորված վերլուծության վրա, հաշվի առնելով՝ ի թիվս այլոց, իրական պայմաններում շահագործման տվյալները, էլեկտրաէներգիայի միջսահմանային փոխանակումը, վառելիքի կազմը և կլիմայական պայմանները, ինչպես նաև կիրառվող համակցված արտադրության տեխնոլոգիաները՝ III հավելվածում սահմանված սկզբունքներին համապատասխան:

▼M1

2. Հանձնաժողովը ստուգում է 1-ին պարբերությունում նշված էլեկտրական և ջերմային էներգիայի անջատ արտադրության արդյունավետության ներդաշնակեցված բազային (հղումային) արժեքներն առաջին անգամ 2011 թվականի փետրվարի 21-ին, իսկ այնուհետև՝ չորս տարին մեկ, տեխնոլոգիական առաջընթացը և էներգիայի աղբյուրների բաշխման փոփոխությունները հաշվի առնելու համար: Այդ ստուգման արդյունքը հանդիսացող յուրաքանչյուր ակտ, որը նախատեսված է սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար, ընդունվում է 14(2) հոդվածում նշված՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող ընթացակարգին համապատասխան:

▼B

3. Սույն հրահանգն իրականացնող անդամ պետությունները, նախքան 1-ին պարբերությունում նշված՝ էլեկտրաէներգիայի և ջերմության անջատ արտադրության արդյունավետության ներդաշնակեցված բազային արժեքները Հանձնաժողովի կողմից հաստատելը, պետք է մինչ 1-ին կետում նշված ժամկետն ընդունեն էլեկտրաէներգիայի և ջերմության անջատ արտադրության արդյունավետության իրենց ազգային ներդաշնակեցված բազային արժեքները՝ համակցված արտադրության պրոցեսում

առաջնային էներգիայի խնայողության հաշվարկման համար՝ III հավելվածում սահմանված մեթոդաբանության համաձայն:

Հոդված 5

Բարձր արդյունավետության համակցված արտադրությամբ ստացված էլեկտրաէներգիայի ծագման երաշխիքը

1. 4(1) հոդվածում նշված՝ արդյունավետության ներդաշնակեցված բազային արժեքների հիման վրա անդամ պետությունները, այդ արժեքային մեծությունների ընդունումից ոչ ուշ քան վեց ամիս հետո, ապահովում են, որ բարձր արդյունավետության համակցված արտադրությամբ ստացված էլեկտրաէներգիայի ծագումը հնարավոր լինի երաշխավորվել յուրաքանչյուր անդամ պետության կողմից սահմանված օբյեկտիվ, թափանցիկ և ոչ խտրական չափանիշներին համապատասխան: Նրանք ապահովում են, որ էլեկտրաէներգիայի ծագման այդ երաշխիքը արտադրողներին հնարավորություն տա ցույց տալ իրենց կողմից վաճառվող էլեկտրաէներգիայի՝ բարձր արդյունավետության համակցված արտադրությամբ արտադրված լինելը, և այդ նպատակով տրամադրվի արտադրողի դիմումի հիման վրա:
2. Անդամ պետությունները կարող են նշանակել արտադրության և բաշխման գործունեությամբ չգբաղվող մեկ կամ ավելի իրավասու մարմին՝ 1-ին պարբերությունում նշված ծագման երաշխիքի հետ կապված հարցերի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար:
3. Անդամ պետությունները կամ իրավասու մարմինները գործողության մեջ են դնում համապատասխան մեխանիզմներ՝ ծագման երաշխիքի ճշգրտությունը և հուսալիությունն ապահովելու նպատակով, և 10(1) հոդվածում նշված հաշվետվության մեջ ամփոփում են երաշխավորման համակարգի հուսալիությունն ապահովելու համար ձեռնարկվող միջոցները:
4. Ծագման երաշխիք տրամադրելու մեխանիզմներով ինքնին չի ենթադրվում պետական աջակցության մեխանիզմներից օգտվելու իրավունքի տրամադրում:
5. Ծագման երաշխիքով՝

— նշվում է այն վառելիքի ստորին ջերմարարությունը, որից արտադրվել է էլեկտրաէներգիան, նշվում է էլեկտրաէներգիայի հետ միասին արտադրված ջերմության օգտագործումը և արտադրության ժամկետներն ու վայրերը,

— նշվում է՝ երաշխիքով ներկայացվող բարձր արդյունավետության համակցված արտադրությամբ ստացված էլեկտրաէներգիայի քանակությունը, II հավելվածի համաձայն,

— նշվում է III հավելվածին համապատասխան հաշվարկված առաջնային էներգիայի խնայողության ցուցանիշը՝ Հանձնաժողովի կողմից 4(1) հոդվածում նշված կարգով սահմանված արդյունավետության ներդաշնակեցված բազային արժեքների հիման վրա:

Անդամ պետությունները կարող են ներառել ծագման երաշխիքին վերաբերող հավելյալ տեղեկություններ:

6. Նման ծագման երաշխիքները, որոնք տրվում են 1-ին կետին համապատասխան, պետք է փոխադարձաբար ճանաչվեն անդամ պետությունների կողմից՝ բացառապես որպես 5-րդ կետում նշված տարրերի ապացույց: Ծագման երաշխիքը որպես նման ապացույց ճանաչելու ցանկացած մերժում, մասնավորապես խարդախության կանխման հետ կապված պատճառներով, պետք է հիմնված լինի օբյեկտիվ, թափանցիկ և ոչ խտրական չափանիշների վրա:

Ծագման երաշխիքը ճանաչելը մերժելու դեպքում Հանձնաժողովը կարող է մերժող կողմին ստիպել ճանաչել այն՝ ելնելով, հատկապես, օբյեկտիվ, թափանցիկ և խտրականությունը բացառող այն չափանիշներից, որոնք հիմք են հանդիսանում ճանաչման համար:

Հոդված 6

Բարձր արդյունավետության համակցված արտադրության ազգային ներուժը

1. Անդամ պետությունները նախաձեռնում են բարձր արդյունավետության համակցված արտադրության, այդ թվում՝ բարձր արդյունավետության համակցված միկրո արտադրության կիրառության ազգային ներուժի վերլուծության անցկացումը:

2. Վերլուծությունը պետք է՝

— հիմնված լինի փաստաթղթերով հիմնավորված գիտական տվյալների վրա և համապատասխանի IV հավելվածում թվարկված չափանիշներին,

— որոշի ջերմամատակարարման և հովացման պահանջարկը բարձր արդյունավետության համակցված արտադրությամբ բավարարելու ամբողջ պոտենցիալը, համակցված արտադրությունում օգտագործվելիք վառելիքների և էներգետիկ այլ ռեսուրսների հասանելիությունը,

— ներառի այն խոչընդոտների առանձին վերլուծություն, որոնք կարող են խանգարել ազգային ներուժի իրացմանը: Մասնավորապես, այդ վերլուծությամբ պետք է ուսումնասիրվեն վառելիքների գների, ծախսերի և մատչելիության հետ կապված խոչընդոտները, ցանցային համակարգերի, վարչական ընթացակարգերի, ինչպես նաև էներգակիրների գների հետ կապված արտաքին ծախսերի փոխհատուցման բացակայության հետ կապված խոչընդոտները:

3. Անդամ պետությունները՝ առաջին անգամ ոչ ուշ քան 2007 թվականի փետրվարի 21-ը, իսկ այնուհետև ամեն չորս տարին մեկ, Հանձնաժողովի պահանջով՝ սահմանված ժամկետից առնվազն վեց ամիս առաջ, գնահատում են բարձր արդյունավետության համակցված արտադրության չափաբաժնի ընդլայնման գծով արձանագրված առաջընթացը:

Հոդված 7

Աջակցության մեխանիզմներ

1. Անդամ պետություններն ապահովում են, որ համակցված արտադրության գոյություն ունեցող և ապագա տեղակայանքների գծով տրամադրվող օժանդակությունը հիմնված լինի օգտակար ջերմության պահանջարկի և առաջնային էներգիայի խնայողության վրա՝ հաշվի առնելով տնտեսապես իրագործելի կամ էկոլոգիապես նպատակահարմար միջոցներով, ինչպես օրինակ՝ էներգախնայողության այլ միջոցներով, էներգիայի պահանջարկի կրճատման համար գոյություն ունեցող հնարավորությունները:

2. Առանց հակասելու Պայմանագրի 87-րդ և 88-րդ հոդվածներին, Հանձնաժողովը գնահատում է օժանդակության տրամադրման՝ անդամ պետություններում առկա մեխանիզմների կիրառումը, որոնց միջոցով համակցված արտադրությամբ էներգիա արտադրողը պետական մարմինների սահմանած կանոնակարգերի հիման վրա ուղղակի կամ անուղղակի օժանդակություն է ստանում, ինչը կարող է առևտուրը սահմանափակող հնարավոր ազդեցություն ունենալ:

Հանձնաժողովը որոշում է, թե արդյոք այդ մեխանիզմները նպաստում են Պայմանագրի 6-րդ հոդվածով և 174(1) հոդվածով սահմանված նպատակների իրագործմանը:

3. 11-րդ հոդվածում նշված հաշվետվության մեջ Հանձնաժողովը ներկայացնում է փաստաթղթերով հիմնավորված վերլուծություն սույն հոդվածի 2-րդ պարբերությունում նշված օժանդակության տարբեր մեխանիզմների կիրառության և համատեղման արդյունքում ձեռք բերված փորձի վերաբերյալ: Հաշվետվությամբ պետք է գնահատվի բարձր արդյունավետության համակցված արտադրության կիրառումը խթանելու գործում օժանդակության համակարգերի միջոցով՝ 6-րդ հոդվածով նշված՝ ազգային ներուժի հնարավորություններին համապատասխան ապահովվող ձեռքբերումները, այդ թվում՝ ծախսարդյունավետությունը: Հաշվետվությամբ այնուհետև պետք է գնահատի, թե որքանով են աջակցության մեխանիզմները նպաստել համակցված արտադրության ոլորտում ներդրումների համար կայուն պայմանների ստեղծմանը:

Հոդված 8

Էլեկտրական ցանցերի համակարգը և սակագնային հարցերը

1. Բարձր արդյունավետության համակցված արտադրությամբ ստացված էլեկտրաէներգիայի հաղորդումն ու բաշխումն ապահովելու համար պետք է կիրառվեն 2001/77/ԵՀ հրահանգի 7(1),(2) և (5) հոդվածի, ինչպես նաև 2003/54/ԵՀ հրահանգի համապատասխան դրույթները:

2. Եթե համակցված արտադրությամբ էլեկտրաէներգիա արտադրողը պետական օրենսդրության համաձայն սպառողի իրավունքներ ունեցող անձ է 2003/54/ԵՀ հրահանգի 21(1) հոդվածի իմաստով, անդամ պետությունները պետք է ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ էլեկտրաէներգիայի արտադրության պահուստային կամ գազաթնային ռեժիմների ապահովման համար գնվող էլեկտրաէներգիայի սակագները սահմանված լինեն հրապարակված սակագների և պայմանների հիման վրա:

3. Հատկապես համակցված արտադրության փոքր և միկրո տեղակայանքների համար բարձր արդյունավետության համակցված արտադրությամբ ստացված էլեկտրաէներգիայի ցանցային համակարգից օգտվելու հնարավորությունները կարող են դյուրին դարձվել Հանձնաժողովին ծանուցելու միջոցով:

Վարչական ընթացակարգեր

1. Անդամ պետությունները կամ նրանց կողմից նշանակված իրավասու մարմինները պետք է գնահատեն բարձր արդյունավետության համակցված արտադրության տեղակայանքների համար կիրառվող՝ լիցենզավորման կամ 2003/54/ԵՀ հրահանգի 6-րդ հոդվածով սահմանված այլ ընթացակարգերի մասով առկա օրենսդրական և կարգավորիչ շրջանակը:

Նման գնահատման նպատակը պետք է լինի՝

ա) նպաստել, որ համակցված արտադրության տեղակայանքների նախագծումը համապատասխանի օգտակար ջերմության՝ տնտեսապես հիմնավորված պահանջարկին, և խուսափել օգտակար ջերմություն չհանդիսացող այլ ջերմության ավել արտադրությունից,

բ) նվազեցնել համակցված արտադրության ընդլայնմանը խոչընդոտող կարգավորիչ և ոչ կարգավորիչ բնույթի խոչընդոտները,

գ) համապատասխան վարչական մակարդակում ռացիոնալացնել/համակարգել և արագացնել ընթացակարգերը, և

դ) ապահովել, որ կանոնները լինեն օբյեկտիվ, թափանցիկ և խտրականությունը բացառող, և ամբողջությամբ հաշվի առնել համակցված արտադրության տարբեր տեխնոլոգիաների/տեխնիկական կառուցվածքների առանձնահատկությունները:

2. Ազգային օրենսդրությամբ նախատեսված դեպքերում անդամ պետությունները նշում են այն փուլը, որին հասել են, մասնավորապես հետևյալ գծով՝

ա) տարբեր վարչական մարմինների միջև համաձայնեցումը՝ լիցենզավորման դիմումների վերջնաժամկետների, ընդունման և ընթացք տալու մասով,

բ) 1-ին կետում նշված միջոցառումների համար հնարավոր ուղեցույցների կազմումը, համակցված արտադրությամբ էներգիա արտադրողների համար արագացված կարգով պլանավորման ընթացակարգի իրագործելիությունը, և

գ) այն մարմինների նշանակումը, որոնք պետք է գործեն որպես միջնորդ լիցենզիաների տրամադրման համար պատասխանատու մարմինների և լիցենզիաներ ստանալու համար դիմողների միջև ծագած վեճերի ժամանակ:

Հոդված 10

Անդամ պետությունների հաշվետվողականությունը

1. Անդամ պետությունները ոչ ուշ քան 2006 թվականի փետրվարի 21-ը հրապարակում են հաշվետվություն, 5(3), 6(1), 9(1) և 9(2) հոդվածներին համապատասխան կազմած վերլուծության և գնահատումների արդյունքներով:

2. Անդամ պետությունները ոչ ուշ քան 2007 թվականի փետրվարի 21-ը, իսկ այնուհետև ամեն չորս տարին մեկ, Հանձնաժողովի պահանջով՝ սահմանված ժամկետից առնվազն վեց ամիս առաջ 6(3) հոդվածում նշված գնահատման արդյունքներով հրապարակում են հաշվետվություն:

3. Անդամ պետությունները Հանձնաժողովին են ներկայացնում էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված ռեժիմով արտադրության վերաբերյալ ազգային վիճակագրական տվյալներն առաջին անգամ մինչև 2004 թվականի դեկտեմբերի վերջը՝ ներառելով 2003 թվականի տվյալները, իսկ այնուհետև ամեն տարի, II հավելվածում ներկայացված մեթոդաբանության համաձայն:

Նրանք տարեկան կտրվածքով վիճակագրական տվյալներ են ներկայացնում նաև համակցված արտադրության հզորությունների և համակցված արտադրության համար օգտագործվող վառելիքների վերաբերյալ: Անդամ պետությունները, III հավելվածում ներկայացված մեթոդաբանությանը համապատասխան, կարող են նաև վիճակագրական տվյալներ ներկայացնել առաջնային էներգիայի խնայողության ցուցանիշների վերաբերյալ, որոնք ապահովվել են համակցված ռեժիմով արտադրության արդյունքում:

Հոդված 11

Հանձնաժողովի հաշվետվողականությունը

1. 10-րդ հոդվածի համաձայն ներկայացված հաշվետվությունների հիման վրա՝ Հանձնաժողովը ուսումնասիրում է սույն Հրահանգի կիրառման ընթացքը և, ոչ ուշ քան մինչև 2008 թվականի փետրվարի 21-ը, իսկ այդուհետ՝ յուրաքանչյուր չորս տարին մեկ, Եվրոպական պառլամենտին ու Խորհրդին է ներկայացնում սույն Հրահանգի իրականացման վերաբերյալ ընթացիկ հաշվետվություն:

Մասնավորապես, հաշվետվության մեջ պետք է՝

ա) քննարկի/ուսումնասիրի 6-րդ հոդվածում նշված բարձր արդյունավետության համակցված արտադրության ազգային հնարավորությունների իրացման հարցում արձանագրված առաջընթացը,

բ) գնահատվի, թե էներգիայի ներքին շուկայում համակցված արտադրության շրջանակային պայմանները սահմանող կանոնները և ընթացակարգերը որքանով են հիմնված օբյեկտիվ, թափանցիկ և խտրականությունը բացառող չափանիշների վրա, հաշվի առնելով համակցված արտադրության օգուտները,

գ) ուսումնասիրվի համակցված արտադրության գծով օժանդակության տարբեր մեխանիզմների կիրառման և համատեղման միջոցով ձեռք բերված փորձը,

դ) ուսումնասիրվի անջատ արտադրության համար արդյունավետության բազային (հղումային) արժեքները՝ հիմք ընդունելով ժամանակակից տեխնոլոգիաները:

Ըստ անհրաժեշտության՝ Հանձնաժողովը հաշվետվության հետ միասին լրացուցիչ առաջարկություններ է ներկայացնում Եվրոպական պառլամենտին և Խորհրդին:

2. 1(ա) պարբերությունում նշված առաջընթացը գնահատելիս Հանձնաժողովն ուսումնասիրում է, թե 6-րդ հոդվածում նշված բարձր արդյունավետության համակցված արտադրության ոլորտում ազգային ներուժը որքանով է իրացվել կամ նախատեսվում իրացվել՝ հաշվի առնելով անդամ պետությունների միջոցները, պայմանները, այդ թվում՝ կլիմայական պայմանները, էներգիայի ներքին շուկայի ազդեցությունները ու Համայնքի այլ նախաձեռնությունների, ինչպես օրինակ՝ Համայնքի տարածքում ջերմոցային գազերի արտանետումների քվոտաների առևտրի համակարգ սահմանող և 96/61/ԵՀ հրահանգը փոփոխող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 թվականի հոկտեմբերի 13-ի 2003/87/ԵՀ հրահանգի ազդեցությունները:

Հարկ եղած դեպքում, Հանձնաժողովը Եվրոպական պառլամենտին և Խորհրդին ներկայացնում է լրացուցիչ առաջարկություններ, ուղղված՝ հատկապես Համայնքում բարձր արդյունավետության համակցված արտադրության զարգացման գծով գործողությունների ծրագրի մշակմանը:

3. 4(1) հոդվածում նշված հաշվարկման մեթոդաբանության հետագա համաձայնեցումը գնահատելու նպատակով Հանձնաժողովն ուսումնասիրում է էներգիայի ներքին շուկայի վրա 12-րդ հոդվածում, II և III հավելվածներում նշված հաշվարկների համատեղման

ազդեցությունը՝ հաշվի առնելով ազգային աջակցության մեխանիզմների կիրառման արդյունքում ձեռք բերված փորձը:

Ըստ անհրաժեշտության՝ Հանձնաժողովը Եվրոպական պառլամենտին և Խորհրդին լրացուցիչ առաջարկություններ է ներկայացնում՝ ուղղված հաշվարկման մեթոդների հետագա համաձայնեցմանը:

Հոդված 12

Այլընտրանքային հաշվարկներ

1. Մինչև 2010 թվականի ավարտը և Հանձնաժողովի կողմից նախնական հաստատման պայմանով, անդամ պետությունները համակցված ռեժիմով չարտադրված էլեկտրաէներգիայի հնարավոր մեծությունը ներկայացված թվային մեծությունից հանելու համար կարող են կիրառել II(բ) հավելվածում նշված մեթոդից բացի այլ մեթոդներ: Այնուամենայնիվ, 5(1) և 10(3) հոդվածներում նշված նպատակներով, համակցված արտադրությամբ ստացված էլեկտրակաէներգիայի քանակը որոշվում է II հավելվածի համաձայն:

2. Անդամ պետությունները կարող են III(գ) հավելվածի համաձայն հաշվարկել ջերմության և էլեկտրաէներգիայի ու մեխանիկական էներգիայի արտադրության արդյունքում ապահովված առաջնային էներգիայի խնայողության ցուցանիշներն, առանց կիրառելու II-րդ հավելվածը՝ նույն պրոցեսում համակցված արտադրության արտադրանք չհանդիսացող ջերմային ու էլեկտրական էներգիայի ծավալը հանելու համար: Այդ արտադրությունը կարող է համարվել բարձր արդյունավետության համակցված արտադրություն այն դեպքում, եթե բավարարված են III(ա) հավելվածում նշված արդյունավետության չափանիշները, իսկ 25 ՄՎտ-ից ավելի էլեկտրական հզորություն ունեցող համակցված արտադրության տեղակայանքների դեպքում՝ ընդհանուր արդյունավետությունը կազմում է 70 տոկոս: Այնուամենայնիվ, ծագման երաշխիքի տրամադրման և վիճակագրական նպատակներով, համակցված արտադրությամբ ստացված էլեկտրակաէներգիայի քանակական բնութագրերը որոշվում են II հավելվածի համաձայն:

3. Մինչև 2010 թվականի ավարտը անդամ պետություններն այլընտրանքային մեթոդաբանության կիրառմամբ կարող են համակցված արտադրությունը սահմանել որպես բարձր արդյունավետության համակցված արտադրություն՝ առանց ստուգելու, որ

համակցված արտադրությունը համապատասխանում է III(ա) հավելվածում նշված չափանիշներին, այն դեպքում, երբ ազգային մասշտաբով ապացուցվում է, որ նման այլընտրանքային մեթոդաբանությամբ սահմանված համակցված արտադրությունը միջինում համապատասխանում է III(ա) հավելվածի չափանիշներին: Եթե նման արտադրության համար տրվում է ծագման երաշխիք, ապա երաշխիքում նշված համակցված արտադրության արդյունավետության ցուցանիշները պետք է չգերազանցեն III(ա) հավելվածում նշված շեմային ցուցանիշները, եթե III հավելվածի համաձայն հաշվարկները հակառակը չեն ապացուցում: Այնուամենայնիվ, ծագման երաշխիքի տրամադրման և վիճակագրական նպատակներով, համակցված արտադրությամբ ստացված էլեկտրակաէներգիայի քանակական բնութագրերը որոշվում են II հավելվածի համաձայն:

▼M1

Հոդված 13

Տեխնիկական առաջընթացի հետ համապատասխանեցումը

1. Հանձնաժողովը II(ա) հավելվածում նախատեսված՝ համակցված արտադրությամբ ստացվող էլեկտրակաէներգիայի հաշվարկման համար կիրառվող շեմային արժեքները համապատասխանեցնում է տեխնիկական առաջընթացին: Սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված այդ ակտերը պետք է ընդունվեն 14(2) հոդվածում նշված՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:
2. Հանձնաժողովը պետք է III (ա) հավելվածում նշված՝ համակցված արտադրության արդյունավետության և առաջնային էներգիայի խնայողության հաշվարկման համար կիրառվող շեմային արժեքները համապատասխանեցնի տեխնիկական առաջընթացին: Սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված այդ ակտերը պետք է ընդունվեն 14(2) հոդվածում նշված՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:
3. Հանձնաժողովը պետք է II (դ) հավելվածում նշված՝ էլեկտրակաէներգիայի և ջերմության հարաբերակցության մեծության որոշման համար կիրառվող ուղեցույցները համապատասխանեցնի տեխնիկական առաջընթացին: Սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված այդ ակտերը պետք է ընդունվեն 14(2)

հողվածում նշված՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

Հոդված 14

Կոմիտեի աշխատանքային ընթացակարգը

1. Հանձնաժողովին աջակցում է Կոմիտեն:
2. Եթե հղում է արվում սույն պարբերությունը, ապա կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 5ա(1)–(4) հոդվածը և 14-րդ հոդվածը՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

▼B

Հոդված 15

Փոխատեղումը

Անդամ պետությունները սույն Հրահանգի կատարման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերն ու վարչական ակտերը գործողության մեջ են դնում ոչ ուշ քան մինչև 2006 թվականի փետրվարի 21-ը: Նրանք այդ մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

Անդամ պետությունների կողմից նշված ակտերի ընդունման դեպքում, դրանցում պետք է հղում պարունակվի սույն Հրահանգին, իսկ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում դրանք պետք է ուղեկցվեն նման հղումով: Նման հղում կատարելու մեթոդները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

Հոդված 16

92/42/ԵՏՀ հրահանգում կատարվող փոփոխությունները

92/42/ԵՏՀ հրահանգի 3(1) հոդվածը լրացնել հետևյալ պարբերությամբ՝

«– համակցված արտադրության տեղակայանքներ, ինչպես սահմանված է «Էներգիայի ներքին շուկայում օգտակար ջերմային պահանջարկի հիման վրա համակցված

արտադրության խթանման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2004 թվականի փետրվարի 11-ի 2004/8/ԵՀ հրահանգում (20) :»

Հոդված 17

Ուժի մեջ մտնելը

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում դրա հրապարակման օրը:

Հոդված 18

Հասցեատերերը

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

ՀԱՎԵԼՎԱԾ I

Սույն Հրահանգով կարգավորվող՝ համակցված արտադրության տեխնիկական կառուցվածքները

ա) համակցված ցիկլով աշխատող՝ ջերմափոխանակիչ գազատուրբինային կայանք

բ) հակաճնշումային տուրբին

գ) կարգավորվող շոգեառումով կոնդենսացիոն տուրբին

դ) ջերմափոխանակիչ գազատուրբինային կայանք

ե) ներքին այրման շարժիչ

զ) միկրոտուրբիններ

է) անթափոն շարժիչներ (Stirling)

ը) վառելիքային տարրեր

թ) շոգեշարժիչներ

ժ) Ռենկինի օրգանական ցիկլ

Ժա) 3 (ա) հոդվածում նշված սահմանումներին համապատասխանող ցանկացած այլ տեսակի տեխնիկական կառուցվածքներ կամ դրանց համակցված տեսակները:

Համակցված արտադրությամբ ստացված էլեկտրաէներգիայի հաշվարկման մեթոդը

Համակցված արտադրությամբ ստացված էլեկտրաէներգիայի հաշվարկման համար կիրառվող արժեքները պետք է սահմանվեն՝ ելնելով բնականոն պայմաններում տեղակայանքի ակնկալվող կամ փաստացի շահագործումից: Համակցված արտադրության միկրո տեղակայանքների դեպքում հաշվարկները կարող են կատարվել հավաստագրված արժեքների հիման վրա:

ա) Համակցված եղանակով էլեկտրաէներգիայի արտադրությունը համարվում է տարեկան կտրվածքով տվյալ տեղակայանքի էլեկտրական էներգիայի տարեկան արտադրանքին հավասար, որը չափվում է գլխավոր գեներատորների արտանցիչներում՝

(i) I-ին հավելվածում նշված (բ), (դ), (ե), (զ), (է) և (ը) տեսակի՝ անդամ պետությունների կողմից սահմանված առնվազն 75 տոկոս տարեկան ընդհանուր արդյունավետություն ունեցող համակցված արտադրության տեղակայանքներում և

(ii) I-ին հավելվածում նշված (ա) և (զ) տեսակի՝ անդամ պետությունների կողմից սահմանված՝ տարեկան առնվազն 80 տոկոս ընդհանուր արդյունավետություն ունեցող համակցված արտադրության տեղակայանքներում:

(բ) (ա) (i) պարբերությունում նշված արժեքից ցածր տարեկան ընդհանուր արդյունավետությամբ համակցված արտադրության տեղակայանքներում ((բ), (դ), (ե), (զ), (է) և (ը) տեսակի համակցված արտադրության տեղակայանքներ) կամ (ա) (ii) պարբերությունում նշված արժեքից ցածր տարեկան ընդհանուր արդյունավետությամբ համակցված արտադրության տեղակայանքներում (I -ին հավելվածում նշված (ա) և (զ) տեսակի համակցված արտադրության տեղակայանքներ) համակցված ռեժիմով ապահովված արտադրանքը հաշվարկելու համար կիրառվում են հետևյալ բանաձևերը՝

$$E_{\text{ՀԷՀԱ}} = Q_{\text{ՀԷՀԱ}} \cdot C$$

որտեղ.

$E_{\text{ՀԷՀԱ}}$ համակցված արտադրությամբ ստացված էլեկտրաէներգիայի քանակն է

C Էլեկտրաէներգիայի և ջերմության հարաբերակցությունն է

ՋՋԷՀԱ համակցված արտադրությամբ ստացված օգտակար ջերմության քանակն է (որը այս նպատակով հաշվարկվում է ջերմության ընդհանուր արտադրանքից հանելով առանձին կաթսայական ագրեգատներից կամ մինչև տուրբին մտնելը գոլորշու գեներատորից թարմ շոգու շոգեառմամբ ստացված ջերմությունը)

Համակցված արտադրությամբ ստացված էլեկտրաէներգիայի հաշվարկը պետք է կատարվի էլեկտրաէներգիայի և ջերմության հարաբերակցության փաստացի մեծության հիման վրա: Եթե համակցված արտադրության տեղակայանքի համար հայտնի չէ էլեկտրաէներգիայի և ջերմության հարաբերակցության փաստացի մեծությունը, ապա՝ մասնավորապես վիճակագրական նպատակներով, I-ին հավելվածում նշված (ա), (բ), (գ), (դ) և (ե) տեսակի տեղակայանքների համար կիրառվում են հետևյալ ստանդարտ արժեքները, պայմանով՝ որ համակցված արտադրությամբ ստացված՝ հաշվարկված էլեկտրաէներգիան պակաս է տեղակայանքի կողմից արտադրվող էլեկտրաէներգիայի ընդհանուր ծավալից կամ հավասար է դրան.

Տեղակայանքի տեսակը	Էլեկտրաէներգիայի և ջերմության հարաբերակցության ստանդարտ մեծություն, Հ
Համակցված ցիկլով աշխատող՝ ջերմափոխանակիչ գազատուրբինային	0,95

կայանք	
Հակաճնշումային տուրբին	0,45
Կարգավորվող շոգեառումով կոնդենսացիոն տուրբին	0,45
Ջերմափոխանակիչ գազատուրբինային կայանք	0,55
Ներքին այրման շարժիչ	0,75

Եթե անդամ պետությունները ներմուծում են I-ին հավելվածում նշված (գ), (ե), (ը), (թ), (ժ) և (ժա) տեսակի տեղակայանքների համար կիրառվող՝ էլեկտրաէներգիայի և ջերմության հարաբերակցության ստանդարտ արժեքներ, ապա այդ ստանդարտ արժեքները հրապարակվում են և դրանց մասին ծանուցվում է Հանձնաժողովին:

գ) Եթե համակցված արտադրության պրոցեսում ծախսվող վառելիքի էներգապարունակության որևէ մաս վերականգնվում է քիմիական նյութերի տեսքով և կրկին օգտագործվում, ապա (ա) և (բ) պարբերություններում նշված ընդհանուր արդյունավետության հաշվարկման նպատակով վառելիքի ծախսից հանվում է այդ մասը:

(դ) Անդամ պետությունները որպես էլեկտրաէներգիայի և ջերմության հարաբերակցություն կարող են սահմանել էլեկտրականության և օգտակար ջերմության միջև հարաբերակցությունը՝ ցածր հզորությամբ համակցված արտադրության ռեժիմով շահագործման դեպքում, օգտագործելով կոնկրետ տեղակայանքի շահագործման տվյալները:

▼M1

ե) Հանձնաժողովը II-րդ հավելվածի իրականացման և կիրառման, այդ թվում՝ էլեկտրաէներգիայի և ջերմության հարաբերակցության որոշման համար սահմանում է մանրամասն ուղեցույցներ:

Լրացումների միջոցով սույն հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված ակտերը պետք է ընդունվեն՝ 14(2) հոդվածում նշված՝ ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

▼B

զ) Անդամ պետությունները (ա) և (բ) պարբերություններին համապատասխան հաշվարկներ կատարելու նպատակով կարող են կիրառել մեկ տարվանից բացի այլ հաշվետու ժամանակահատվածներ:

**Համակցված արտադրության պրոցեսի արդյունավետությունը որոշելու
մեթոդաբանությունը**

Համակցված արտադրության արդյունավետության և առաջնային էներգիայի խնայողության ցուցանիշների հաշվարկման համար կիրառվող արժեքները պետք է սահմանվեն՝ ելնելով բնականոն պայմաններում տեղակայանքի ակնկալվող կամ փաստացի շահագործումից:

ա) Բարձր արդյունավետության համակցված արտադրություն

Սույն Հրահանգի նպատակով բարձր արդյունավետության համակցված արտադրությանը պետք է բավարարի հետևյալ չափանիշները՝

— համակցված արտադրության տեղակայանքներում ջերմային և էլեկտրական էներգիայի անջատ արտադրության համեմատ՝ համակցված արտադրությամբ պետք է ապահովվի առաջնային էներգիայի առնվազն 10 տոկոս խնայողություն՝ հաշվարկված (բ) կետի համաձայն,

— համակցված արտադրության՝ առաջնային էներգիայի խնայողություն ապահովող փոքր և միկրո տեղակայանքների արտադրությունը կարող է որակավորվել որպես բարձր արդյունավետության համակցված արտադրություն:

բ) Առաջնային էներգիայի խնայողության ցուցանիշների հաշվարկը

Ըստ II հավելվածի սահմանված առաջնային էներգիայի խնայողության՝ համակցված արտադրությամբ ապահովվող ցուցանիշը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$PES = \left[1 - \frac{1}{\frac{CHP_{H\eta}}{Ref_{H\eta}} + \frac{CHP_{E\eta}}{Ref_{E\eta}}} \right] \times 100 \%$$

Որտեղ՝

ԱԷԽ՝ առաջնային էներգիայի խնայողության ցուցանիշն է

ՀԶԷ՝ Ջղջերմային էներգիայի համակցված արտադրության արդյունավետությունն է, որը

(դՀ) որոշվում է որպես օգտակար ջերմային էներգիայի տարեկան արտադրանքի և համակցված արտադրությամբ ստացվող օգտակար ջերմության ու էլեկտրական էներգիայի արտադրության գումարային քանակության համար տարվա ընթացքում ծախսված վառելիքի հարաբերություն

Բազ Ջջերմային էներգիայի անջատ արտադրության արդյունավետության բազային (դԱ) (հղումային) արժեքն է

ՀԶԷ Էղէլեկտրաէներգիայի համակցված արտադրության արդյունավետությունն է, որը (դՀ) որոշվում է որպես համակցված արտադրությամբ ստացվող էլեկտրական էներգիայի տարեկան արտադրանքի և համակցված արտադրությամբ ստացվող օգտակար ջերմության ու էլեկտրական էներգիայի արտադրության գումարային քանակության համար տարվա ընթացքում ծախսված վառելիքի հարաբերություն: Եթե համակցված արտադրության տեղակայանքն արտադրում է մեխանիկական էներգիա, համակցված եղանակով արտադրված էլեկտրական էներգիայի տարեկան քանակությունը կարող է ավելացվել ևս մեկ լրացուցիչ՝ էլեկտրական էներգիայի քանակը ներկայացնող տարրով, որը համարժեք է մեխանիկական էներգիայի քանակին: Այդ լրացուցիչ տարրը 5-րդ հոդվածի համաձայն ծագման երաշխիքներ տրամադրելու իրավունք չի ստեղծում:

Բազ Էղէլեկտրական էներգիայի անջատ արտադրության արդյունավետության բազային (դՀ) (հղումային) արժեքն է:

գ) Էներգիայի խնայողության ցուցանիշների հաշվարկումն այլընտրանքային մեթոդով՝ 12(2) հոդվածի համաձայն

Եթե պրոցեսի համար առաջնային էներգիայի խնայողության ցուցանիշները հաշվարկվում են 12(2) հոդվածի համաձայն, ապա առաջնային էներգիայի խնայողության ցուցանիշները հաշվարկվում են օգտագործելով սույն հավելվածի (բ) պարբերության մեջ նշված բանաձևը փոխարինելով՝

«ՀԶԷ Ջդ»-ն՝ «Ջդ»-ով, և

«ՀԶԷ Էդ»-ն՝ «Էդ»-ով,

որտեղ՝

Ջդ՝ պրոցեսի ջերմային արդյունավետությունն է, որը որոշվում է որպես ջերմային էներգիայի տարեկան արտադրանքի և ջերմության ու էլեկտրական էներգիայի արտադրության գումարային քանակության համար տարվա ընթացքում ծախսված վառելիքի հարաբերություն:

Էդ՝ պրոցեսի էլեկտրաէներգետիկ արդյունավետությունն է, որը որոշվում է որպես ջերմային էներգիայի տարեկան արտադրանքի և ջերմության ու էլեկտրական էներգիայի արտադրության գումարային քանակության համար տարվա ընթացքում ծախսված վառելիքի հարաբերություն: Եթե համակցված արտադրության տեղակայանքն արտադրում է մեխանիկական էներգիա, համակցված եղանակով արտադրված էլեկտրական էներգիայի տարեկան քանակությունը կարող է ավելացվել ևս մեկ լրացուցիչ՝ էլեկտրական էներգիայի քանակը ներկայացնող տարրով, որը համարժեք է մեխանիկական էներգիայի քանակին: Այդ լրացուցիչ տարրը 5-րդ հոդվածի համաձայն ծագման երաշխիքներ տրամադրելու իրավունք չի ստեղծում:

դ) Անդամ պետությունները սույն հավելվածի (ա) և (բ) պարբերություններին համապատասխան հաշվարկներ կատարելու նպատակով կարող են կիրառել մեկ տարվանից բացի այլ հաշվետու ժամանակահատվածներ:

ե) Համակցված արտադրության միկրո տեղակայանքների դեպքում առաջնային էներգիայի խնայողության ցուցանիշների հաշվարկները կարող են կատարվել հավաստագրված արժեքների հիման վրա:

զ) Ջերմային և էլեկտրական էներգիայի անջատ արտադրության արդյունավետության բազային (հղումային) արժեքները

Ջերմային և էլեկտրական էներգիայի անջատ արտադրության արդյունավետության՝ 4(1) հոդվածում և սույն հավելվածի (բ) պարբերությունում նշված բազային (հղումային) արժեքները սահմանող սկզբունքների հիման վրա պետք է սահմանվի ջերմային և էլեկտրական էներգիայի անջատ արտադրության շահագործման

արդյունավետությունը, որը նախատեսվում է փոխարինել համակցված արտադրությամբ:

Արդյունավետության բազային (հղումային) արժեքները հաշվարկվում են հետևյալ սկզբունքների համաձայն՝

1. 3-րդ հոդվածում նշված համակցված արտադրության տեղակայանքների դեպքում, անջատ արտադրության հետ համեմատությունը պետք է հիմնված լինի այն սկզբունքի վրա, որ համեմատվեն վառելիքի միևնույն կատեգորիաները:

2. Համակցված արտադրության յուրաքանչյուր տեղակայանք համեմատվում է այդ տեղակայանքի կառուցման տարվա դրությամբ շուկայում առկա ջերմային և էլեկտրական էներգիայի անջատ արտադրության լավագույն և տնտեսապես հիմնավորված տեխնոլոգիայի/տեխնիկական կառուցվածքի հետ:

3. Ավելի քան 10 տարվա հնություն ունեցող համակցված արտադրության տեղակայանքների արդյունավետության բազային (հղումային) արժեքները ֆիքսելու համար պետք է վերցվեն տեղակայանքների 10 տարի առաջվա բազային (հղումային) արժեքները:

4. Էլեկտրաէներգիայի և ջերմային էներգիայի անջատ արտադրության արդյունավետության բազային (հղումային) արժեքներում պետք է արտահայտված լինեն նաև անդամ պետությունների միջև բնակլիմայական պայմանների տարբերությունները :

**Բարձր արդյունավետության համակցված արտադրության ազգային
հնարավորությունների վերլուծության չափանիշները**

ա) 6-րդ հոդվածում նշված ազգային հնարավորությունների վերլուծությամբ պետք է հաշվի առնվի՝

— վառելիքների տեսակները, որոնք հավանական է օգտագործվեն համակցված արտադրության պոտենցիալի իրացման նպատակով, այդ թվում, հատուկ ուշադրություն դարձնելով ջերմային էներգիայի ազգային շուկայում վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործման հնարավորությունների մեծացմանը՝ համակցված արտադրության միջոցով,

— համակցված արտադրության՝ I հավելվածում թվարկված տեխնոլոգիաների/տեխնիկական կառուցվածքների տեսակները, որոնք հավանականություն ունեն օգտագործվելու ազգային պոտենցիալի իրացման համար,

— ջերմային և էլեկտրական էներգիայի կամ՝ եթե նպատակահարմար է, մեխանիկական էներգիայի անջատ արտադրության տեսակը, որը նախատեսվում է փոխարինել համակցված արտադրությամբ,

— պոտենցիալի բաժանումն՝ ըստ գոյություն ունեցող հզորությունների արդիականացման և նոր հզորությունների կառուցման:

բ) Վերլուծության մեջ պետք է ներառվեն համապատասխան մեխանիզմներ, որոնց միջոցով հնարավոր լինի գնահատել ազգային էներգետիկ կառուցվածքում համակցված արտադրությանը բաժին ընկնող մասի ավելացման ծախսարդյունավետությունը՝ առաջնային էներգիայի խնայողության մասով: Ծախսարդյունավետության վերլուծության մեջ պետք է հաշվի առնվեն նաև Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիային կից Կիոտոյի արձանագրությանը համապատասխան՝ կլիմայի փոփոխության մասով Համայնքի ստանձնած պարտավորությունների համատեքստում ստանձնած ազգային պարտավորությունները:

գ) Համակցված արտադրության ոլորտում ազգային պոտենցիալի վերլուծության մեջ պետք է մատնանշվեն 2010, 2015 և 2020 թվականների ժամկետների հետ կապված հնարավորությունները և՛ նպատակահարմարության դեպքում, ներառվեն յուրաքանչյուր ժամկետի համար նախատեսվող համապատասխան նախահաշիվները:

(1) ՊՏ C 291 E, 26.11.2002թ., էջ 182

(2) ՊՏ C 95, 23.04.2003թ., էջ 12

(3) ՊՏ C 244, 10.10.2003թ., էջ 1

(4) Եվրոպական պառլամենտի 2003 թվականի մայիսի 13-ի եզրակացություն (Պաշտոնական տեղեկագրում դեռ չի հրապարակվել), Խորհրդի 2003 թվականի սեպտեմբերի 8-ի ընդհանուր դիրքորոշում (Պաշտոնական տեղեկագրում դեռ չի հրապարակվել) և Եվրոպական պառլամենտի 2003 թվականի դեկտեմբերի 18-ի դիրքորոշում (Պաշտոնական տեղեկագրում դեռ չի հրապարակվել):

(5) ՊՏ L 176, 15.07.2003թ., էջ 37

(6) ՊՏ C 140 E, 13.06.2002թ., էջ 543

(7) ՊՏ C 273 E, 14.11.2003թ., էջ 172

(8) ՊՏ C 4, 08.01.1998թ., էջ 1

(9) ՊՏ C 167, 01.06.1998թ., էջ 308

(10) ՊՏ C 343, 05.12.2001թ., էջ 190

(11) ՊՏ C 257, 10.10.1996թ., էջ 26

(12) ՊՏ L 309, 27.11.2001թ., էջ 1

(13) ՊՏ L 332, 28.12.2000թ., էջ 91

(14) ՊՏ L 1, 04.01.2003թ., էջ 65

(15) ՊՏ L 283, 27.10.2001թ., էջ 33

(16) ՊՏ C 37, 03.02.2001թ., էջ 3

(17) ՊՏ L 167, 22.06.1992թ., էջ 17: Վերջին անգամ 93/68/ԵՏՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 220, 30.08.1993թ., էջ 1):

(18) ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23

(19) ՊՏ L 275, 25.10.2003թ., էջ 32

(20) ՊՏ L 52, 21.02.2004թ., էջ 50